

Կ Ե Ա Ն Ք

I

Ամարանոցում, շքեղ զարդարուած
Ընտիր նախաճաշն առաջին դրած,
Մայր անտառի խիտ կենսատու հովին,
Կեանքն էր վայելում իշխանի որդին:

Անցաւ երկու ժամ, դրին նոր սեղան
Բերին խորտիկներ համով զանազան.
Անուշ ըմպելիք, քաղցրահամ ջրեր
Եւ եղեմական ընտիր պտուղներ...

Անձնատուր շուայտ, նուրբ վայելչանքին
Եւ արևելեան փարթամ ճաշակին,
Մերթ նայում էր նա իւր ճոխ սեղանին
Մերթ արևի տակ այրուող մշակին:

Երբեմն էլ նրանց խրախոյս կարդում,
— Դէ, շուտ իմ տղայք, լաւ էք աշխատում
Ինչ էր մտածում թէ նա այդ ժամին—
Աստծուն է յայտնի մարդկային գաղտնին
Բայց մենք տեսնում ենք, որ կեանքը այստեղ
Մէկին դժոխք է, միւսին խիստ շքեղ:

II

Սոված եմ, հայրիկ, ինձ բանթոյդ արա,
Սաստիկ ծարաւից սիրտս կը դողայ,
Երեկ այս ժամին մենք երկու անգամ
Հաց էինք կերել, թող քիչ դընջանամ:

Ձայնդ, անպիտան, ասում եմ, կտրիր.
Թող հոգիդ դուրս գայ և քաղցից մեռիր.

Միթէ կարող ենք որ երբ կամենանք
Մեր հացը ուտենք, մենք էլ դընջանանք:

Մենք հո մարդիկ չենք, այլ մի անասուն
Որ պէտք է տանջուենք մինչև իրիկուն,
Մենք վարձկաններ ենք և ոչ գործի տէր,
Վարձկանի օրը միշտ սև է եղել:

Ներիր, սիրելիս, որ խիստ զայրացած
Պօսուամ եմ քեզ հետ. ես էլ եմ քաղցած.
Բայց թէ ում ի՞նչ փոյթ. չէ՞ փող են տալիս,
Այդպէս է կեանքը, ճար չկայ, հոգիս:

Հող չունենք ցանենք, այգի՝ որ ջրենք,
Էլ մեր ապրուստը մենք ինչով ճարենք.
Էլ որտեղից մենք վճարենք հարկեր,
Էլ ի՞նչպէս հոգանք մեր ծով կարիքներ:

Միշտ հլու, համեստ, բառի անուան տակ
Մենք շատ ենք վարժուել երկար ժամանակ.
Մեր նախնիքը մեզ այսպէս են կրթել
Մենք պարտաւոր ենք մեր մեծին լսել:

Ինձ մի նախատիր, որ ես քո մասին
Լաւ չեմ հոգացել իր ժամանակին.
Պապդ ինձ թողեց մի ժառանգութիւն.
Ոչ արուեստ, ուսում, այլ մշակութիւն:

Այժմ դանակը ոսկորին հասած,
Հարկ է այդ մասին մի բան մտածած.
Ով որ ուզում է մարդու պէս ապրի
Պէտք է սեփական մի գործ ստեղծի:

III

Իշխանի որդին վեր կացաւ տեղից,
Գուցէ զգացուած մշակի խօսքից,
Իսկոյն պատուիրեց նա իւր ծառային
Առատ կերակուր տալ մշակներին: